

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
**ԼՂՀ դպրոցականների VI սպարտակիադայի ծրագրով
աթլետիկայի հանրապետական մրցումների**

1. Նպատակը և խնդիրները

- Աթլետիկայի զարգացում ԼՂՀ-ում,
- Աթլետիկայի մասսայականացում դպրոցականների միջև,
- Տաղանդավոր պատանի մարզիկների հայտնաբերում,
- ԼՂՀ դպրոցականների աթլետիկայի հավաքական թիմի կազմավորում,
- Արտադասարանական մարզական աշխատանքների ակտիվացում դպրոցներում,
- Առողջ ապրելակերպի պրոպագանդում և մարզական վարպետության ակտիվացում,
- Ազգային բանակում ծառայելու պատրաստական, ֆիզիկապես առողջ և կոփված զորակոչիկների պատրաստում:

2. Մրցումների կազմակերպումն ու ղեկավարումը

Մրցումների ընդհանուր ղեկավարությունը իրականացնում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը/այսուհետ նախարարություն/՝ ԼՂՀ ԿԱ սպորտի պետական կոմիտեի հետ համատեղ, իսկ անմիջական անցկացման պատասխանատվությունը դրվում է նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնախբի վրա:

3. Մրցումների անցկացման վայրը և ժամկետը

Մրցումները անց են կացվելու Ստեփանակերտի հանրապետական մարզադաշտում 2015թ. մայիսի 11-13-ը:

4. Առաջնության մասնակիցները

Առաջնությանը մասնակցում են Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների աշակերտներից կազմված 1-ական հավաքական թիմեր: Թիմի կազմը 11 մարզիկ՝ 5 տղա, 5 աղջիկ և 1 մարզիչ-ներկայացուցիչ:

Մրցումներին իրավունք ունեն մասնակցել 1998 թ. ծնված և ցածր տարիքի աղջիկներ և պատանիներ:

5. Առաջնության ծրագիրը

1. Վազք 100մ
2. Վազք 200մ
3. Վազք 400մ
4. Հեռացատկ
5. Վազք 800մ
6. Վազք 1500 մ /տղաներ/
7. Փոխանցումավազք շվեդական /100 x 200 x 300 x 400/ մ՝ աղջիկ, տղա, աղջիկ, տղա հաջորդականությամբ:

6. Անցկացման ժամկետները /ժամանակացույց/

1. 11.05.2015թ. - Հայտերի ընդունում, մասնակիցների տեղավորում,
2. 12.05.2015թ. - Մրցումների հանդիսավոր բացում, վազք 100մ , վազք 200մ, վազք 400մ, հեռացատկ:
3. 13.05. 2015թ. - Վազք 800մ ու 1500մ մրցաձևերի անցկացում, փոխանցումավազք և առաջնության հանդիսավոր փակում:

7. Առաջնության հաղթողների որոշման կարգը

Մրցումների բոլոր ձևերում, ըստ արդյունքների տրվում են տեղեր և համապատասխան միավորներ:

Օրինակ՝ եթե մասնակցում են 8 թիմեր ապա 1-ին տեղի համար տրվում է 8 միավոր, 2-րդ տեղի համար 7 և այդպես շարունակ:

Ընդհանուր թիմային առաջնությունը որոշվում է մրցումների առանձին մարզաձևերում տեղերով հավաքած միավորների գումարով:

Ընդհանուր հաշվարկում հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է այն հավաքական թիմին, որը լավագույն է ճանաչվել շվեդական փոխանցումավազք մարզաձևից:

8. Պարգևատրում

Ընդհանուր թիմային հաշվարկում մրցանակային տեղեր զրաված թիմերը և յուրաքանչյուր մարզաձևի հաղթողները պարգևատրվում են նախարարության համապատասխան մեդալներով, դիպլոմներով, պատվոգրերով, արժեքավոր նվերներով:

9. Մասնակիցների և հանդիսատեսների անվտանգության ապահովումը

Առաջնությունը անց է կացվում Ստեփանակերտի հանրապետական մարզադաշտում , որը համապատասխանում է ԼՂՀ տարածքում գործող նորմատիվային և իրավական ակտերով կարգավորված՝ հասարակական կարգի և մասնակիցների ու հանդիսատեսների անվտանգության ապահովման միջոցներին:

Առաջնության ողջ ընթացքում բուժ. ապահովումը իրականացնում է «Սպորտմեդ» ՍՊԸ բուժ. անձնակազմը:

10. Ֆինանսական ծախսերը /պայմանները/

Ատլետիկայի մրցումների կազմակերպման և անցկացման հետ կապված բոլոր ծախսերը /ճանապարհածախս, սնունդ, գիշերավարձ, մրցավարների և սպասարկող անձնակազմի վարձատրություն, հաղթող թիմերի պարգևատրություն/ հոգում է նախարարությունը:

11. Մասնակցության հայտերը

Առաջնության մասնակիցների անվանական հայտերը /ծևը՝ հավելված 3/, բժշկի պարտադիր ստորագրությամբ, ներկայացվում են մանդատային հանձնախմբին, մասնակիցների ժամանման օրը՝ մայիսի 11-ին:

Սույն կանոնակարգը հանդիսանում է պաշտոնական հրավեր առաջնությանը մասնակցելու համար:

ԼՂՀ ԿԳՆ ՌՀ, ՖԴ և ՀԿՀԿ բաժին